Քաղվածք

ՀՀ մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի 2019 թ. ապրիլի 11-ին ժամը 14³⁰ - ին կայացած 3-րդ նիստի արձանագրության

Նիստի նախագահ՝ Տ. Գալստյան
Քարտուղար՝ Կ. Հակոբյան

Մասնակցում էին՝ Ա. Աբրոյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Շաքարյան, Ա. Գրիգորյան, Գ. Նալբանդյան, Ա. Բադիշյան, Հ. Սանամյան, Ս. Նալբանդյան, Կ. Փահլևանյան, Գ. Համազասպյան, Ա. Դավայան, Հ. Գևորգյան, Ա. Հակոբջյանյան, Հ. Հարությունյան,

Հրավիրված էին՝ Ա. Եղիազարյան, Ա. Սանսոնեթթի, Հ. Առաքելյան, Մ. Մկրտչյան, Է. Մանուկյան, Խ. Ղազարյան, Ս. Աբովյան, Ա. Հակոբյան, Ս. Մելիք-Քարամյան.

ՕՐԱԿԱՐԳ

8. Երևան քաղաքի Մաշտոցի պողոտա 48 շենքի N 66 հասցեում շենքին կից վերելակի տեղադրման էսքիզային նախագծի քննարկում:

Զեկ.՝ Ս. Գրիգորյան

ԼՍԵՑԻՆ՝ Ս. Գրիգորյանը ներկայացրեց նախագիծը. Մաշտոցի պողոտա 48 շենքի N 66 հասցեում գտնվող շենքը՝ հանրապետական նշանակության հուշարձան է: Նախատեսվում է բակի կողմից շենքի խուլ պատին կից իրականացնել վերելակ, որը վերևի հարկում աստիճանավանդակի վերակառուցված պատուհանով մուտք է ունենալու դեպի սանդղահարթակ: Եթե հետագայում աստիճանավանդակի 3-րդ և 4-րդ հարկերի պատուհանները դռան վերակառուցելու թույլտվություն տրվի, ապա վերալակից կարող են օգտվել նաև այդ հարկերը:

Տ. Գալստյան - Ընդհանուր առմամբ դեմ չեմ, որ վերելակ կցվի խուլ պատին, սակայն ինձ համար խնդիրը՝ ճարտարապետությունն է: Ես չեմ պատկերացնում այս շենքին կցված «այլուկոբոնդից» որևէ կցակառույց: Միգուցե՞ վերելակը իրականացնե՞լ մետաղական կոնստրուկցիաներով և ապակեպատ, որպեսզի երևա հուշարձանի հետևի պատը և աստիճանավանդակը լինի լուսավորված: Անհրաժեշտ է նախագիծը մշակելիս նաև աշխատել կոնստրուկտորի հետ:

Գրիգորյան – Մենք համաձայն ենք վերելակի այդ տարբերակին:

Ա. Աբրոյան - Քանի որ պատուհանը վերակառուցվելու է դռան վերևի հարկում, իսկ հետագայում նաև այլ հարկերում (3-րդ և 4-րդ հարկերում) ապրող բնակիչներն էլ կուզենան օգտվել վերելակից, առաջարկում եմ միասնական լուծում տրվի՝ այլընտրանքային, թե աստիճանավանդակի ներսում, թե դրսում:

Ա. Գրիգորյան – Ներկայացված նախագիծը լրակազմ չէ. անհրաժեշտ է ներկայացնել հատակագիծ, վերելակով կտրվածք, որտեղ երևալու է մուտքը վերելակից դեպի շենք:

Հ. Սանամյան - Ներկայացված ճակատը իրականում այդպիսինը չի լինելու, այլ իրականում լինելու է պատշգամբ՝ ճաղաշարով, որ վերելակից դուրս եկողը չընկնի:

Ա. Աբրոյան – Գոյություն ունի 29 դեկտեմբերի 2005 թվականի N 2338-Ն ՀՀ կառավարության (ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման մեջ լրացում կատարելու և պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների տեղափոխման և փոփոխման կարգը հաստատելու մասին) որոշում, համաձայն որի անհրաժեշտ է մշակույթի նախարարություն ներկայացնել հուշարձանի տեխնիկական վիճակի մասին ակտը, դրա հիման վրա՝ պատվիրատուի և հեղինակի կողմից կազմված հուշարձանի փոփոխման առաջադրանքի նախագիծը՝ նախարարությունից եզրակացություն ստանալու համար: Նախարարության եզրակացության հիման վրա մշակվում է կառավարության որոշման նախագիծ: Այսինքն, համաձայն կարգի՝ գիտամեթոդական խորհուրդը համապատասխան հիմնավորումներով տալիս է եզրակացություն, և այդ փաստաթղթերի առկայության դեպքում նաև՝ շահագրգիր մարմինների կարծիքները ստանալուց հետո ամբողջ փաթեթը ներկայացվում է կառավարություն: Կառավարությունից հուշարձանի փոփոխության թույլտվությունը ստանալուց հետո տրվում է ճարտարապետահատակագծային առաջադրանք: Կարգը այդպիսին է:

Այլ նկատառումներ. գլխավոր մուտքի մոտ, որտեղ աստիճաններ են և ծաղկամաններ, այդ հարթակը պետք է բաց լինի՝ քաղաքաշինական նորմերին համապատասխան, և մյուս առաջարկությունը. վերելակի վերևում ցցված ծավալը՝ «գլուխը» անհրաժեշտ է իջեցնել:

Տ. Գալստյան - Կարևոր խնդիրը այն է, որ պարզենք, թե՞ այդ վերելակի տեղադրումը ինչքանո՞վ է խաթարելու հուշարձանին: Առաջարկեց քվեարկություն՝ ապակեպատ վերելակի և մետաղական կոնստրուկցիաներով լինելու առաջարկի վերաբերյալ:

Քվեարկության արդյունքում նիստի բոլորը մասնակիցները կողմ քվեարկեցին, որ վերելակը իրականացվի մետաղական կոնստրուկցիաներով և լինի ապակեպատ:

ՈՐՈՇՎԵՑ՝ Հաշվի առնելով քվեարկության ժամանակ գիտամեթոդական խորհրդի անդամների կոնստրուկցիաներով ապակեպատ վերելակի իրականացնելուն կողմ լինելու հանգամանքը Մաշտոցի պողոտա 48 շենքի N 66 հասցեում շենքին կից մետաղական էսքիզային նախագիծը վերանայել, լրացնել կտրվածքներով և հատակագծերով, ինչպես նաև լրամշակել՝ հաշվի առնելով մասնագետների կարծիքները:

Խորհրդի նախագահ՝ **Տ. ԳԱԼՍՏՅԱՆ**

Քարտուղար՝ **Կ. ՀԱԿՈԲՅԱՆ**